

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԵՐ ԱԻԱԳ

(Ալֆոնս Դոդէի)

Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Զ Ի Ն

I

Մի հարսանիքի վեճուելի հիւրանոցում:

—Տիկին Շէր:

—Ի՞նչ է, որդիս...

—Շատ գոհ եմ...

Քսաներորդ անգամը կը լինէր այդ օրը, որ Ռիսլէրն ասում էր, թէ շատ գոհ է, և միշտ միննոյն խանդաղատ ու անդորր կերպարանքով, միննոյն ծորուն, խոր ու խուլ ձայնով,—ձայն, որ ճնշւում է յուզմունքից և չէ համարձակւում շատ բարձր խօսել, որ մի գուցէ յանկարծ խզուի արցունքից:

Ի հարկէ, Ռիսլէրը աւելի լաւ կը համարէր գետինը մտնել, քան լալ այդ բոպէին,—ո՛վ է տեսել, որ նորափեսան լայ հարսանիքի խնջոյքում: Սակայն սիրտը շատ լիքն էր: Երջանկութիւնը խեղդում էր նրան, սղմում էր կոկորդը, կապում էր լեզուն: Այնքան էր կարողանում միայն, որ երբեմն-երբեմն մըրմնջում էր փոքր ինչ դողուն չըթունքներով «Շատ գոհ եմ... Շատ գոհ»...

Եւ իրօք հիմբ ունէր նա գոհ լինելու:

Առաւօտից ի վեր խեղճ մարդը երազի մէջ էր կարծում իրան, այն հնաշխարհիկ երազներից մէկում, որոնցից մարդ վախենում է զարթնել յանկարծ՝ չլացած աչքերով, բայց սրա երազը անվերջանալի էր թւում իրան: Առաւօտեան ժամի հինգին էր ակտուել այդ և երեկոյեան ժամի տասին, ուղիղ տասին վէճուելի մեծ ժամացոյցով, դեռ շարունակւում էր այդ...

Ի՞նչ բաներ էին անցել այդ օրը, և ինչպէս պարզ աչքի առաջն էին ամենաչնչին մանրամասները:

Նա տեսնում էր իրան՝ լուսաբացին, իր սենեակում, այդ՝ ծեր-ամուրիի սենեակում, որ նա չափշիւում էր անհամբերութեան ու հրճուանքի խառն զգացմունքով, միտումնաբերական շիտակած, ֆրակը հագած ու երկու գոյգ սպիտակ ձեռնոց գրպանումը պատրաստ... Յետոյ ահա մի շարք հանդիսային կառքեր և այն առաջին՝ սպիտակ ձիերով, սպիտակ երաւաններով և դեղին դաւաճակի աւառով կառքում նորահարսի զարդաւաճքը, որ սպիտակ լինէ տալիս աւաճի պէս... Այնուհետեւ մուտքը եկեղեցի՝ երկ-երկու և դարձեալ առջևում այդ սպիտակ ամպը՝ աւառուն, թեթև ու շրջադիպչ... Ապա երգեհոնը, լուսաբարը, քահանայի քարոզը, մոմերի լոյսում փայլող զուրքերն ու դարձեալ զգացմունքներ... և բազմութեան խռնուելը խորանում, որի ընթացքում սպիտակ ամպիկը կորչում է, թաղում, չըջապատում, գրկից զերկ անցնում, մինչդեռ նորափեսայի փոխփոխ ձեռք է տալիս փարիզի ամբողջ բարձր առևտրականութեան, որ եկել է այդտեղ պատուելու նրա հարսանիքը... Եւ երգեհոնի վերջին ուժգին բախումը, աւելի ևս հանդիսաւոր՝ չնոհնիւ եկեղեցու լայնարաց դռան, որ ամբողջ փողոցը մասնակից է դարձնում ընտանեկան ծէսին, և հնչիւնների անցքը գաւթով միաժամանակ թափօրի հետ, և թաղի բնակիչների բացականչութիւնները, և նրանց մէջ այն մեծ գոգնոցաւոր կնոջ բարձրաձայն նկատողութիւնը՝ «փեսան գեղեցիկ չէ, բայց հարսը շատ սիրունն է...»—Նորափեսայ պէտք է լինէր, որ իմանար, թէ ինչպէս է այդ հպարտութեամբ լցնում մարդու սիրտը...

Յետոյ նախաճաշը գործարանի՝ պատասխանելով ու ծաղիկներով զարդարուած արհեստանոցում, զբօսանքը Բուլօնեան անտառում, կատարուած ի հաճոյս զորանչի, որ, իբր փարիզի մանր բուրժուազիային պատկանող կին, չէր հաւատալ, թէ աղջիկը պսակուել է, եթէ չերթային պտտելու լճի շուրջը և այցելելու ջրվէժը... Ապա վերադարձը անտառից ճաչին, այն ժամանակ, երբ լապտերները վառում էին բուլվարում, ուր բոլորը չուէին գալիս նայելու հարսանիքին, այդ իսկապէս ճոխ հարսանիքին, որ վարձկան ձիերը հասցրին մինչև Վէֆուրի սանդուխները: Իր երազի այդ կէտումն էր նա:

Եւ այժմ, յոգնութիւնից ու երջանկութիւնից թմրած, Ռիսլէրը մտամուրթ նայում էր այդ ահագին, ութսուն սարքաւոր սեղանին, որ վերջանում էր պայտածն ծայրերով և չըջապատուած էր ժպտուն ու ծանօթ դէմքերով,—և թուում էր նրան, թէ բո-

լորի աչքերումն էլ արտափայլում է իր բախտաւորութիւնը: Ճաշը վերջանալու վրայ էր: Մասնաւոր խօսակցութիւնների պիւրքները ծփում էին սեղանի շուրջը: Երևում էին դէմքեր՝ դարձած դէպ իրար, ֆրակի սև թևեր՝ ծաղկազամբիւղների յետևից, մի ծիծաղուն մանկական երես՝ թեքուած պաղպաղակի ափսէի վրայ, և դէմքերի բարձրութեամբ շարուած դէմէրտը, որ հըրձուանք, գոյներ ու շողքեր էր տարածում ամբողջ սփռոցի շուրջը:

Այն, այն, շատ գոհ էր Ռիսէրը:

Բացի եղբորից՝ Ֆրանցից, այդտեղ էին նրա բոլոր սիրելիները: Նախ և առաջ նրա դէմ ու դէմ նստած Սիդոնին, երէկուայ փոքրիկ Սիդոնին, որ այսօր նրա կինն էր արդէն: Ճաշին նստելիս նա հանկէ էր քօղը, դուրս էր եկել իր սպիտակ ամպի մէջից: Այժմ նրա մետաքսէ միահարթ և սպիտակ հագուստից վերև երևում էր նրա սիրուն դէմքը, որի սպիտակութիւնը աւելի մեղմ էր և փայլատ, քան մետաքսինը, և նրբահիւս ծաղկէ պսակի տակ՝ մաղբրի պսակը, որ թռչելու պատրաստ փետուրների կենսալից խլրտումներ ու ցոլքեր ունէր: Բացց ամուսինները Երբ են նկատում այդպիսի բաներ:

Սիդոնից ու Ֆրանցից յետոյ Ռիսէրի ամենասիրելի մարդը աշխարհումն՝ տիկին Ժօրժ Ֆրօմօնն էր, — «տիկին Շօրշ», Ռիսէրի արտասանութեամբ, — նրա առևտրական ընկերակցի կինը, նրա առաջուայ պատրօնի ու կուռքի, հանգուցեալ Ֆրօմօնի աղջիկը: Նա նստադրել էր տիկնոջը իր կողքին և խօսում էր հետը ավանդական քնքշութեամբ ու ակնածութեամբ: Բոլորովին ջահել կին էր այդ, գրեթէ տարեկից Սիդոնիին, բայց աւելի կանոնաւոր, աւելի անդորր գեղեցկութեամբ: Նա քիչ էր խօսում, խորթ զգալով իրան այդ խառնակ հասարակութեան մէջ, սակայն աշխատում էր լինել սիրալիր:

Ռիսէրի միւս կողքին նստած էր նորահարսի մայրը՝ տիկին Շէրը, որ պլպլում, ֆրֆում էր իր՝ վահանի պէս պսպղան կանաչ սատրիէ զգեստում: Առաւօտից ի վեր նրա բոլոր մտածմունքները նոյնքան փայլուն էին, որքան այդ խորհրդաւոր դոյնով զգեստը: Բոպէ չէր անցում, որ նա չսէր ինքն իրան՝ «Աղջիկս պսակում է Վիէյլ-Օդրիէտ փողոցի Ֆրօմօն կրտսերի և Ռիսէր աւագի հետ...»: — Նրա խելքով, միայն Ռիսէր աւագը չէր, որ կնութեան էր առնում նրա աղջկան, այլ այդ ամբողջ հոշակաւոր առևտրական տունը: Եւ ամեն անգամ, երբ տիկին Շէրը հաստատում էր այդ փառաւոր դէպքը, աւելի ևս ձգւում էր, այնպէս որ վահանաճան զգեստի մետաքսը ճրճուում էր վրան:

Ինչ հակապատկեր այն դիրքին, որ բռնել էր մի քանի

աթոռ դէնը նստած պարոն Շէքը: Ընտանիքում, ընդհանրապէս, միևնոյն պատճառներն առաջացնում են բոլորովին տարբեր հետեանքներ: Այդ փոքրիկ մարդը, որ ունէր ուսուպիստի մեծ ճակատել, ուռուցիկ ու դատարկ, ինչպէս պարտէզ զարդարող գունտերը, նոյնքան զայրացած էր երեւում, որքան ուրախ-ուրախ ցնծում էր իր կինը: Ասենք՝ այդ ամենին փոփոխութիւն չէր քցում պարոն Շէքի մէջ, որովհետեւ նա զայրացած էր լինում ամբողջ տարին: Այդ երեկոյ, սակայն, նրա դէմքը այնպէս թթուած ու թօշնած չէր, ինչպէս առհասարակ, և նա չունէր հագին իր լայն ու ծփուն վերարկուն, որի գրպանները միշտ ուռած էին լինում այլ և այլ ձէթերի, գինիների կամ քացախների նմուշներից, նայելով թէ այդ ապրանքներից որ մէկն էր նա դնում նրանց մէջ: Նրա Ֆրակը, հոյակապ ու նոր, կարող էր մրցել կնոջ կանաչ զգեստի հետ, բայց դժբախտաբար նրա մտածմունքներն էլ սև էին Ֆրակի նման... Ինչու նրան չէին նստացրել նորահարսի կողքին, ինչպէս պահանջում էր հարկը... Ինչու էին բազմեցրել նրա տեղը Ֆրոմօն կրտսերին... Եւ ծեր Գարգինուան, Ֆրոմօնների պապը, ինչ էր չինում նա Սիդօնի կողքին... Այդպէս է, այդպէս: Ամեն բան Ֆրոմօնների համար և ոչինչ Շէքերի համար... Եւ դեռ զարմանում են, որ մարդիկ յեղափոխութիւն են անում...

Բարեբախտաբար՝ այդ զայրացած փոքրիկ մարդու կողքին նստած էր իր բարեկամ Դըլօբէլը,—մի անգործ հին դերասան, որի առաջ նա թափում էր սրտի դառնութիւնը և որ լսում էր նրան իր՝ մեծաշուք օրերի վեհ ու անդորր դէմքով: Շատ էլ մարդ, թատրոնապետների չարակամութեան չնորհիւ, տասնհինգ տարի հեռացած լինի բեմից, այնուամենայնիւ, պէտք եղած ժամանակ, նա կարող է գտնել դէպքերին պատշաճող բեմական դիրքեր: Եւ իրաւ՝ այդ երեկոյ Դըլօբէլի գլուխը կատաբեկապէս հարսանիքային էր, կերպարանքը՝ կիսալուրջ, կիսաժպտուն, ներողամիտ դէպի փոքրիկ մարդիկ, միաժամանակ և անբռնադրօտիկ և հանդիսաւոր: Կ'ասես բեմի վրայ լինէր, մի որևէ առաջին դործողութեան խնջոյքի ժամանակ, նստած ստուերաթղթէ կերակուրները չըջապատող դերակատարների շարքում, հանդիսատեսներով լի դահլիճի առաջ, և այդպէս դեր կատարողի կերպարանք ունէր այդ տարօրինակ Դըլօբէլը ևս աւելի այն պատճառով, որ կարծելով թէ անշուշտ երեկոյթի ընթացքում կ'օգտուեն իր տաղանդից, սեղան նստելու րոպէից կրկնում էր մտքում իր ուշադրութեամբ ամենասիրուն կտորները, որ տալիս էր նրա դէմքին մի տեսակ անորոշ, չինծու և մտամոլոր արտայայտութիւն, այն կեղծ ուշադիր կերպա-

բանքը, որ ունենում են առհասարակ բնում գտնուող դերասանները, որոնք ձևանում են, թէ լսում են իրանց հետ խօսողին, բայց ամբողջ ժամանակը իրանց տալիք պատասխանի մասին են միայն մտածում:

Տարօրինակ բան,—նորահարսի դէմքի արտայայտությունն էլ մի քիչ այդպես էր: Ինչ որ գաղտնի հոգս էր երևում այդ ջանելու սիրուն երեսի վրայ, որ աշխոյժ էր ստացել երջանկութիւնից՝ առանց պայծառանալու, և ժամանակ առ ժամանակ մի թոռցիկ ժպիտ էր խաղում նրա բերնի անկիւնում,—կ'ասես թէ՝ խօսելիս լինէր ինքն իրան:

Նոյն թոռցիկ ժպիտովն էր պատասխանում նա իր աջակողմը նստած Գարդինուս պապի փոքր ինչ համարձակ կատակներին:

—Այ քեզ աղջիկ, ասում էր ծերունը ծիծաղելով... Երկու ամիս չը կայ, ինչ ասում էր, թէ կուսանոց է մտնելու... Էջ գիտե՞ք այդ ջանել աղջիկների կուսանոցները... Ծյո՛ղ ոնց որ մեր գիւղացիք ասում են—կուսանոցի խցի մէջ՝ չորս ոսկաման օսիսի օսի:

Եւ բոլոր սեղանակիցները սրտանց ծիծաղում էին, լսելով գոհիկ կատակները այդ ծերունի գեղջուկի, որի կեանքում վիթխարի հարստութիւնը փոխարինում էր ամեն բան՝ և՛ սիրտ, և՛ կրթութիւն, և՛ բարութիւն, բայց ոչ խելք, որովհետեւ խելք ունէր այդ աղուէս ումիկը, և նոյն իսկ աւելի, քան այդ բոլոր բուրժուաները միասին: Այն սակաւաթիւ մարդկանցից, որոնք փոքր ի շատէ համակրութիւն էին ներշնչում նրան, Գարդինուսային առանձնապէս դուր էր գալիս այդ փոքրիկ Շէբը, Սիդոնին, որին նա ճանաչում էր նրա երեխայ ժամանակից: Սիդոնին էլ, որ, իբր դեռ նոր հարստացած, չէր կարող առանց ակնածութեան վերաբերուել դէպի հարստութիւնը, ակնյայտի պատկառանքով և կօքէտութեամբ էր խօսում իր աջակողմեան հարևանի հետ:

Իւր ձախակողմեան հարևանի, իւր ամուսնու ընկերակից Ժօրժ Ֆրոմօնի վերաբերմամբ, ընդհակառակը, շատ զուսպ էր ցոյց տալիս նա իրան: Նրանց խօսակցութիւնը չէր անցնում սեղանակիցների մէջ պարտադիր քաղաքավարութիւնների սահմանից, և նոյն իսկ մի տեսակ շինծու անտարբերութիւն էր նկատւում նրանց մէջ:

Յանկարծ բազմականների մէջ սկսուեց այն թեթեւ իրաբանցումը, որ ցոյց է տալիս, թէ չուտով վեր են կենալու,—մետաքսի խշխշոց, աթոռների աղմուկ, խօսակցութիւնների վերջին բառերը, ծիծաղների ընդհատումը,—և այդ կիսալուրժեան

մէջ տիկին Շէրը, որի լեզուն բացուել էր, ասում էր իր գաւառացի ազգականներից մէկին, որ հիանում էր, թէ ինչպէս զուտ ու հանգիստ է պահում իրան, այդ բոլորէն ալ Գարդինուայի հետ թեանցուկ կանգնած, նորահարսը.

— Տեսնում էր այդ երեխային... Երբէք ոչ որ չէ կարողացել խնամել, թէ ինչ կայ դրա մարմամբ:

Այդ ժամանակ ամենքը վեր կացան և գնացին մեծ դահլիճը: Մինչ պարահանդէսին հրախրուածները խումբ-խումբ դուրս էր գործիքները, իսկ վաղ պարող մանակնոցս (մանակնոց) երիտասարդները քրքրում էին անհամբեր օրհարդների սովորակ զգեստների առաջ, նորաթեան, որ աստիկ քաւում էր այդ ահագին բազմութիւնից, իր բարեկամ Պրանուսի հետ, — երեսուն տարիից ի վեր Ֆրամենների առեւտրական տան զանձապահ Սիդիզմունդ Պրանուսի հետ, — պատրաստուել էր այն փորձիկ ծաղկազարդ սրտազամբում, որ իր ծաղիկներով ու պատերի թղթի պատաստեկարոյսերի նկարներով մի տեսակ կանաչազարդ նկարաշխարհ է կազմում Վէֆուրի սոկեղոսը դահլիճների համար: Գոնէ այնտեղ նրանք մննակ էին, կարող էին խօսել:

— Սիդիզմունդ, սիրելիս... շատ զո՛ւ եմ...

Սիդիզմունդն էլ շատ զո՛ւ էր, բայց Ռեպէրը ժամանակ չէր տալիս նրան այդ ասելու: Այժմ, երբ նա այլևս չէր վախենում, թէ կարող է լալ բազմութեան առաջ, սրտի ամբողջ ուրախութիւնը զեղում էր անզուսպ:

— Մէկ մտածիր, սիրելիս... Որքան տարօրինակ բան է, որ նրա պէս մի քահէլ աղջիկ ինձ հաւանեց: Առանց այսօրուայ այն աներևա կեռջ տեսլուն էլ՝ ես վաղուց գիտէի, որ զեղեցիկ չեմ: Այս էլ կայ, որ քառասուն երկու տարեկան եմ... Իսկ նա այնքան սիրուն է... Բռնի-քանի աբիներ կային, որոնց նա կարող էր ընտրել, աւելի քահէլ, աւելի բաւ, էլ չեմ խօսում մեր խեղճ Ֆրանցի մասին, որ այնքան սիրում էր նրան... Բայց չէ, բոլորին թողեց ու իր ծեր Ռեպէրին քոկեց... Եւ որքան տարօրինակ կերպով եղաւ այդ... Շատ ժամանակ էր, տխուր էր երևում աչքիս, բոլորովին փոխաւած: Անդառնառ սիրահարուած կրկնի աղջիկը, ասում էի ինձ ու ինձ... Ես ու մայրը խեղբ խեղբ էինք տալիս, քարդում էինք զրոյաներս, որ խնամեք, թէ ո՞վ կը լինի այդ... Եւ ահա մի ասուած տիկին Շէրը մանում է սենեակիս ու ասում ինձ լալով. — Քեզ է սիրում աղջիկս, իմ աղնիս բարեկամ, քեզ... ու ի՞նչ... համբանում ես, ինձ... Հը՞, ում մարտիը կ'անցնէր այդպիսի բան Աստուած երկու ձե-

սով է տալիս ինձ այս տարի... Ֆրոմոնների տան առևտրական ընկերը դարձայ և Սիդոնիի մոմսերը... Օհ...

Այդ բոլորին՝ վաղ ապրտիցների մի զուգ պտոյտ դալով մոտ փոքրիկ դահլիճը՝ Նորաճարսն էր այդ՝ Ռիսկերի ընկերակից ժորթ ֆրոմոնի հետ։ Երկուսն էլ ջանել, երկուսն էլ նորաշնորհ, նրանք խօսում էին կիսամայն, պարփակելով իրանց խոսքերը վաղի նեղ չըջաններում։

— Մնա էր ասում... պնդում էր Սիդոնին, մի քիչ դաժնա-
տում և դարձնալ թաուցիկ ժպտը բերանին։

Ֆրոմոնը, աւելի դաժնա, պատասխանում էր.

— Սառ չեմ ասում։ Հորեղբորս կամքովն եղաւ ամուսնու-
թիւնս։ Նա մոռնելու վրայ էր... դուք գնացել էիք... Ձը համար-
ձակուկի չէ տակ...

Ռիսկերը հեռուից հիանում էր նրանց վրայ.

— Ուրան սիրուն է կինս, որքան լաւ են պարում...

Բայց պարտիները, նրան նկատելով, բաժանուկցին իրա-
րից և Սիդոնին աշխուժով մտնեցաւ նրան.

— Վա, այստեղ էր եղեր Ի՞նչ էր անում այստեղ... Ձեզ
ամեն տեղ փնտրում են Ի՞նչաւ այնտեղ չէք...

Այդպէս խօսում էր հետը ու միմեայն ժամանակ՝ սնհամ-
բեր կնոջ սիրուն չարժամով շրտելով էր նրա փողպատի հան-
գայցը։ Ռիսկերը հիացել մնացել էր ու աչքի պոչով ժպտում էր
Սիդոնիային և անբան երջանիկ արամադրութեան մէջ էր,
զգալով կնոջ փոքրիկ ձեռնոցապատ ձեռքի չիումը իր վրին,
որ չէր կարող նկատել, որ այդ ձեռքը դողդողում էր իբր բոլոր
նուրբ մասներով։

— Տաւք ինձ ձեր թեր, ասաց նրան կինը, և նրանք մտան
միասին դահլիճները կնոջ երկարատեւա օպիտակ դղեստը աւելի
ևս նկատելի էր դարձնում մարդու՝ փառ ձերի և փառ նստող
ֆրակի անշնորհութիւնը. բայց ֆրակը փողպատ չէ, որ չիտ-
կուի,— ուղէր չուղէր, պէտք է հաշտուէր այդ պակասութեան
հետ... Մինչ նրանք, անցնելիս, բարեւում էին բոլոր հիւրերին,
որոնք յոռապում էին բարեւել նրանց, Սիդոնիի սիրտը մի բոլե-
լցուկ հարատութեամբ և մնալատութիւնը յաղտորդ ասացաւ։
Դժբախտաբար երկար չը տեսց այդ։ Դահլիճի մի անկիւնում
նստած էր մի ջանել ու սիրուն կին, որին ոչ որ չէր հրաւիրում
սրբելու և որ դիտում էր պարերը առաջին մայրութեան հըր-
ձուանքով փայլող անդորր հայկացքով։ Հէնց որ նրան նկատեց,
Ռիսկերը գնաց ուղիղ դէպի նա և ստիպեց Սիդոնին նստել
նրա կողքին։ Աւելորդ է տակ, որ տիկին «Ծօրչն» էր այդ էլ
ուրիշ ում հետ կարող էր Ռիսկերը խօսել այդպիսի գորովայից

պատկանանքով: էլ ուրիշ ում ձեռքի մէջ կարող էր նա դնել իր սիրունիկ Սիդօնիի ձեռքը, ասելով. «Դուք կը սիրէք սրան, այնպէս չէ: Այնքան բարի էք դուք... Սա այնքան կարօտ է ձեր խորհուրդներին, ձեր աշխարհաճանաչութեան...»:

— Բայց չէ որ, իմ բարի Ռիսէրը, պատասխանում էր տիկին ժօրժը.— Սիդօնին ու ես հին բարեկամներ ենք... Եւ հազարաւոր պատճառ կայ, որ մենք այսուհետեւ էլ շարունակենք սիրել միմեանց...

Եւ նրա հայեացքը, անկեղծ ու անդորր, աշխատում էր հանդիպել իր հին բարեկամուհեւ հայեացքին, բայց ի զուրկ...

Ռիսէրը, որ ամենեւին չէր ճանաչում կանանց և սովոր էր երեխայի տեղ դնել Սիդօնիին, շարունակեց նոյն եղանակով.

— Սրան օրինակ չինիր քեզ, փոքրիկս... Տիկին Շօրշի հասար չը կայ աշխարհումս... Տեղն ու տեղը հանդուցեալ հայրն է իր աննման սրտով... Իսկական Ֆրօմօն է...

Սիդօնին, աչքերը քաշ քցած, լուռ ծռում էր գլուխը, աննշմարելի սարսուռ զգալով, որ անցնում էր նրա ամբողջ մարմնով մետաքսէ հողաթափերի ծայրից սկսած մինչև ծաղկէ պըսակի վերջին չիւղը: Բայց Ռիսէրը ոչինչ չէր տեսնում: Սրտի յուզմունքը, պարերը, երաժշտութիւնը, այդ բոլոր ծաղիկները, այդ բոլոր ճրագները... Նա հարբածի պէս էր, ցնորուածի պէս: Նա կարծում էր, թէ ամենքն էլ իր պէս չնչում են այն աննման երջանկութեան մթնոլորտում, որ շրջապատում էր իրան: Նա չէր զգում, թէ ինչ մրցութիւններ և մանր ատելութիւններ եւ անցնում դառնում այդ բոլոր պճնազարդ ճակատներից բարձր:

Նա չէր տեսնում բուխարիին կոթնած Դըլօբէլին, որ արդէն յոգնել էր միշտ միեւնոյն դիրքում մնալով, ձեռքը ժլէտի արանքում ու գլխարկը ազդրի վրայ պահած, մինչդեռ ժամեր էին անցնում և ոչ ոք չէր մտածում շահագործել նրա տաղանդները: Նա չէր տեսնում պ. Շէրին, որ մտայլ կուշ էր երկել երկու դռան արանքին, աւելի քան երբեքէ կատաղած՝ Ֆրօմօնների դէմ... Օհ, այդ Ֆրօմօնները... Ի՞նչ մեծ տեղ էին բռնում նրանք այդ հարսանիքում... Նրանք ամենքը այստեղ էին իրանց կանանցով, իրանց երեխաներով, իրանց բարեկամներով ու իրանց բարեկամների բարեկամներով... Հէնց իմանաս նրանցից մէկի պսակը լինէր... Ո՞վ էր հարցնում Ռիսէրների կամ Շէրերի մասին... Իրան նոյն իսկ չէին ներկայացրել հիւրերին, իրան, նորահարսի հօրը... Բայց այդ փոքրիկ մարդու կատաղութիւնը աւելի ևս սաստկացնողը, կրկնապատկողը՝ իր կնոջ վարմունքն էր, իր կնոջ, որ, կանաչ ու կարմրին տուող զգեստը հագին, մայրաբար ժպտում էր ամենքին:

Պէտք է ասած, որ այդտեղ էլ, ինչպէս գրեթէ բոլոր հարսանիքներում, երկու տարբեր հոսանքներ կային, որոնք չբուռում էին իրար՝ առանց խառնուելու: Այդ հոսանքներից մէկը շուտով տեղի տուեց միւսին: Պ. Շէրին այնքան գրգռող և հարսանիքի ազնուական դասը կազմող ֆրոմոնները՝ առևտրական ատեանի նախագահը, հաւատարմատարների աւագը, Օրէնսդրական ատեանի *) պատգամաւոր յայտնի չօլօլատ արդիւնաբերողը, ծեր միլլիօնէր Գարդինուան—դրանք բոլորը քաշուեցին գնացին կէս գիշերից մի փոքր անցած: Նրանց յետևից ժօրժ ֆրոմոնն ու իր կիներն էլ տուն գնացին կառքով: Այնուհետև մնացին միայն Ռիպէրն ու Շէրերը, իրանց ծանօթ ու բարեկամներով, և երեկոյթը, անմիջապէս փոխելով տեսքը, դարձաւ աւելի աղմկալի:

Հռչակաւոր Դըլօբէլը, տեսնելով, որ ոչ ոք ոչինչ չէ խնդրում իրանից, ձանձրացաւ ու վճռեց ինքն իրանից խնդրել մի բան և զօղանջող ձայնով սկսեց Ռիպի-Բլասի մենախօսութիւնը՝ «Bon appétit, messieurs!..» («Քաղցր ախորժակ, պարոններ...»), մինչդեռ հարսանիքաւորները խոնուում էին սեղանի մօտ չօլօլատի ու փունչի բաժակների առաջ: Խնայողաբար կարած կանացի զգեստներն սկսեցին ազատ փոռել աթոռների վրայ, ուրախացած, որ վերջապէս իրանք էլ կարող են մի տպաւորութիւն գործել, և քրքրուան ջանքով խանութպանները, սիրտ առած, սկսեցին քաղրիլ՝ պարել այստեղ այնտեղ: Նորահարսը վաղուց ուղում էր տուն գնալ: Վերջապէս նա անյայտացաւ Ռիպէրի և տիկին Շէրի հետ: Ինչ վերաբերում է պ. Շէրին, որ այժմ ձեռք էր բերել իրան վայել ամբողջ կարևորութիւնը,— անկարելի էր նրան տուն տանել: Վա, հօ չէ կարելի, որ ոչ մի հարսանիքատէր չը մնայ հարսանիքում: Եւ պէտք է ասած, խեղճը իրան մորթում էր հարսանիքաւորներին զբաղեցնելու համար: Պէտք է տեսնէլք, ինչպէս էր կարմրատակել՝ բորբոքուել, կրակ կտրել, ինչ աղմկարար, գրեթէ խռովարար էր գարձել: Ներքից լսում էր, որ նա Վէֆուրի հիւրանոցապետի հետ քաղաքական հարցերի մասին էր խօսում և ճյուղիսի յանդուգն բաներ էր ասում **)...

...Հարսանիքային կառքը, որի թմրած կառապանը մի քիչ թոյլ էր պահում սպիտակ երասանները, ծանր-ծանր գնում էր ամայի փողոցներով գէպի Մարէի կողմը:

*) Նապօլէօն III-ի ժամանակ պատգամաւորների ժողովը կոչում էր Օրէնսդրական ատեան (Corps législatif), Ծ. Թ.

**) Վէպի նիւթը վերաբերում է Նապօլէօն III-ի կայսրութեան ժամանակին, Ծ. Թ.

Տիկին Շէրը անվերջ խօսում էր, թուելով այդ յիշատակելի օրուայ բոլոր սքանչելիքները, դմայլուած մանաւանդ ճաշից, որի ամենաստորակաւն կերակուրները շոյալութեան ամենաբարձր արտայայտութիւնն էին նրա աչքուած Սիդօնին երազում էր կառքի ստուերում, իսկ Ռիսլէրը, նստած նրա դիմացը, եթէ այլ ևս չէր էլ ասում՝ «չառ գո՛հ եմ»... մտքումը կրկնում էր այդ ի բոլոր սրտէ։ Մի անգամ նա ուզեց բռնել Սիդօնի փոքրիկ սպիտակ ձեռքը, որ նա դէմ էր տուել բարձրացրած ապակուն, բայց ձեռքը իսկոյն յետ քաշուեց, և նա մնաց անշարժ իր տեղում, խորատուգում անբարբառ երկրպագութեան մէջ։

Անցան շուկաները ու բանջարափաճառների սայլերով լի Ռամբուտօ փողոցը, յետոյ, Ֆրան-Բուրժուա փողոցի ծայրում, ծոնցին Արչիվէրի անկիւնի մօտով ու մօտան Բրաքի փողոցը։ Այնտեղ նրանք մի քիչ կանգ առան, և տիկին Շէր իջաւ կառքից իրանց դռան առաջ, որ շատ նեղ էր տիկնոջ սքանչելի կանաչ մետաքսէ զգեստի համար, որ պառակուեց սրահանցքի մէջ խռովածայն խշխշոցով և բոլոր ծալքուծուքերի մրմռթոցով... Մի քանի րոպէ անց՝ Վիէյլ-Օդրիէտ փողոցում կրունկի վրայ բացուեց ու ճանապարհ տուեց հանգիսային կառքին մի ահագին կուռ դարպաս, որի հին ապարանային վանանակը, կիսով չափ եղծուած տոհմանիչի տակ, կրում էր կապոյտ տառերով գրած «Որմաթղթեր» ցուցատախտակը։

Այս անգամ, նորահարսը, անշարժ ու քնածի պէս, կարծես յանկարծ զարթնեց և, եթէ բակում ձգուող ահագին շէնքերի, արհեստանոցների ու պահեստների բոլոր ճրագները հանգցրած չը լինէին, Ռիսլէրը կարող էր տեսնել, թէ ինչպէս միանգամից մի յաղթական ժպիտ պայծառացրեց այդ հանելուկային սիրուն դէմքը։ Անիւնների ձայնը մեղմացաւ մանր աւազի վրայ և կառքը շուտով կանգ առաւ մի երկյարկանի փոքրիկ ապարանքի մուտքի առաջ։ Այդտեղ էր ապրում ջահէլ Ֆրօմօնների զոյգը, և Ռիսլէր աւագը իր կնոջ հետ ընակութիւն էր հաստատելու նրանց վերելում։ Բնակարանի սարք ու կարգը մեծավայել էր։ Այդտեղ հարուստ վաճառականութիւնը իր սխր հանում էր խաւար փողոցից ու յետ ընկած թաղից։ Մի ահագին գորդ սանդուխթի ներքևից տանում էր մինչև նրանց կացարանը, որի նախասենեակը զարդարուած էր ծաղիկներով, և ամեն կողմից երևում էին սպիտակափառ մարմարներ, շողշողուն հայելիներ և կոփուած պղնձեղէն։

Մինչդեռ Ռիսլէրը հրճուալից սրտով պտտում էր իր կացարանի բոլոր սենեակները, Սիդօնին մնացել էր մենակ իր սենեակում։ Առօրեից կախուած փոքրիկ կապտագոյն լամպի լոյսով՝

Նա նախ և տալ մի հայեացք դեպ հայելիի վրայ, որ ցոլացնում էր նրան ոտից մինչև գլուխ, և բոլոր այդ թարմ շալվարթեան վրայ, որին այնքան անտուր էր նա. յետոյ, փոխանակ պառկելու, նա բաց արեց պատուհանը և մնաց անշարժ, յենուած ճաղերի վրայ:

Գիշերը պայծառ էր ու տաք: Նա պարզ տեսնում էր ամբողջ գործարանը, նրա անթիւ անվանդակափեղկ պատուհանները, նրա շողուն ու բարձր ապակիները, նրա երկար ծխնելոյզը, որ կորչում էր երկնքի խորութեան մէջ, և աւելի մօտ՝ այդ փոքրիկ ճոխ պարտէզը, փարուած հինաւուրց ապարանքի հնամաշ պատին: Ու չորս կողմը՝ տխրատես ու աղքատիկ տանիքներ և խաւսր, խաւսր փողոցներ... Յանկարծ սարսուռ անցաւ նրա մարմնով: Այնտեղ, այդ կարծես աղքատութեան ծանրութեան տակ իրար կուչ եկած, իրար կոթնած վերնատուններից մէկում, որ ամենամուսկն էր ու ամենատձեւը, երևում էր հինգերորդ յարկի մի լուսամուտ, լայն բացուած ու լի խաւսրով: Նա իսկոյն ճանաչեց այդ պատուհանը: Իր ծնողների բնակարանի սրահի պատուհանն էր այդ:

Սրահի պատուհանը...

Ո՛րքան բաներ էր յիշեցնում նրան լոկ այդ անունը: Ո՛րքան ժամեր, որքան օրեր է անցրել նա այնտեղ, նայելով գործարանի կողմը, կռացած այդ լուսամուտի անյենարան ու անվանդակ խոնաւ շուրթի վրայ: Հէնց այդ րոպէին էլ նրան թւում էր, թէ տեսնում է այնտեղ, վերեւում, փոքրիկ Շէքի սիրունիկ դէմքը, և նրա աչքի առաջ՝ այդ աղքատիկ պատուհանի չրջանակում անցնում էր իր ամբողջ մանկական կեանքը, իր տխուր ջանելութիւնը փարիզեցի աղջկայ:

II

Փոքրիկ Շէքի պատմութիւնը:—Նեւեբ ընկալիմ մի սրահի շուրջը:

Փարիզում, աղքատ ընտանիքների համար, որոնք շատ նեղուածք են զգում իրանց չափազանց փոքր բնակարաններում, ընդհանուր սրահը աւելորդ սենեակի տեղ է ընտրում, մի տեսակ յաւելուած է կազմում կացարանին կից: Այնտեղով է ներս թափանցում ամառը մի փոքր օդ դրսից, այնտեղ են կանայք զրոյց անում, երեխաները՝ խաղում:

Երբ փոքրիկ Շէքը շատ էր աղմուկ անում տանը, մայրը ասում էր նրան—«Է՛, գլուխ տարար... Գնա սրահում խաղարա»: Եւ երեխան իսկոյն վազում էր այնտեղ:

Այդ սրահը, որ գտնուում էր վերջին յարկումը մի հին տան, որի շինողները ամենեին չէին խնայել տեղը, կազմում էր մի տեսակ մեծ ու բարձրադիր միջանցք, պաշտպանուած՝ սանդուխքի կողմից երկաթակուռ ճաղերով և լուսաւորուած մի լայն պատուհանով, որի մէջից երևում էին չրջակայ տանիքները, բակերը, ուրիշ պատուհաններ և հեռուում՝ Փրօմօնների գործարանի պարտէզը, որ կանաչին էր տալիս հնաչէն ու հսկայակերպ պարիսպների արանքին:

Շատ էլ ուրախ տեպ չունէր այդ բոլորը, բայց երեխային այդտեղ աւելի էր գուր գալիս, քան նեքսեում, որովհետև նրանց առտնին կեանքը չափազանց ախուր էր, մանաւանդ անձրև օրերը, երբ Ֆէրդինանդը տանն էր մնում:

Ֆէրդինանդ Շէքը ծոյլ ու ծրագրամոլ բուրժուաներից մէկն էր, որոնցից այնքան շատ կայ ֆարիզում, և նրա գլուխը միշտ լիքն էր նոր-նոր ծրագրերնրով, որոնք դժբախտաբար երբէք չէին իրագործուած: Նրա կինը, որին նա կարողացել էր շլացնել սկզբում, շատ չուտով նկատեց նրա ոչնչութիւնը և ի վերջոյ սովորեց միակերպ համբերութեամբ տանել նրա մշտական երազանքները հարստանալու մասին և այդ երազանքներին անմիջապէս հետևող ձախորդութիւնները:

Կնոջ օժիտ բերած և մարդու ձեռքով անհեթեթ ձեռնարկութիւնների վրայ վատնուած ութսուն հազար ֆրանկից մնում էր միայն մի փոքրիկ հասոյթ, որ դեռ բարձր էր պահում նրանց իրանց հարեաններից, ինչպէս նաև տիկին Շէքի՝ բոլոր փոխձանքներից ազատած կաշմիրէ շալը, հարսանիքի ժանեակները և երկու շատ մանր, շատ համեստ ադամանդէ կոճակները, որ Սիդօնիի աղաչանքով մայրը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս նրան պահարանի աչքի խորքում, սպիտակ թաւիշով պատած մի հին տուփի մէջ, ուր գտհարաւաճառի երեսուն տարի առաջ ոսկետառ դրոշմած անունը գրեթէ ջնջուել էր բոլորովին: Միակ չոպլուրթեան առարկան էր դա այդ խղճուկ բնակարանում:

Երկար, շատ երկար ժամանակ պ. Շէքը տեղ էր վնասուում՝ իր փոքրիկ հասոյթը աւելացնելու համար: Բայց այդ տեղը նա վնասուում էր միայն, ինչպէս ինքն անուանում էր, ոսկկայ առեւտրի մէջ, որովհետև նրա առողջութիւնը չէր դիմանում նրատական պարապմունքի:

Կարծես, խեղճը, ձիչդ որ, ամուսնութեան սկզբի ժամանակները, երբ խոշոր առևտրի մէջ էր և յատուկ ձի ու փոքրիկ կռօք ունէր վաճառատան գործերի համար, մի օր սաստիկ վայր էր ընկել կառքից: Այդ փորձանքը, որի մասին նա խօսում էր

տեղի անտեղի, արդարացնող պատրուակ էր նրա ծուլութեան համար:

Անկարելի բան էր, որ մարդ հինգ բոլե մնար պ. Շէքի հետ և նա չ'ասէր գաղտնախորհուրդ եղանակով.

«Յայտնի է ձեզ Օրլէանի դուքսին պատահած փորձանքը...»

Ու յետոյ չ'աւելացնէր, թիւթիկացնելով իր ճաղատ դանդը.

«Իմ գլխին էլ նոյն փորձանքն է եկել ջահէլ ժամանակս»:

Այդ հոշակաւոր անկումից յետոյ՝ ամեն տեսակ գլխակոյր աշխատանքից նրա աչքերը միջնում էին, ուստի նա ճակատագրորէն ստիպուած էր բաւականանալ ոսկկայ առեւտրով: Այդպիսով նա հետզհետէ դարձել էր վաճառամիջնորդ գինու, գրքերի, թայլի, *) ժամացոյցի և հազար ու մի ուրիշ բաների առևտրի մէջ: Դժբախտաբար նա չուտ զգուշ էր գործից, երբէք բաւարար չը գտնելով իր դիրքը՝ երբեմն յատուկ կառք ունեցած վաճառականի համար, և այդպէս քիչ-քիչ, սովորելով միշտ իրանից ստոր համարել ամեն մի պարագամուր, ծերացել էր ու դարձել մի անպէտք ու անգործ արարած, զբաղուած միայն փողոց չափելով ու քամի կուլ տալով:

Շատ են յարձակուել արտիստների վրայ նրանց տարօրինակ վարմունքների, նրանց բնաւորութեան քմահաճոյքների և դէպի պատշաճականութիւնը տաճած ատելութեան համար, որ նրանց մղում է դէպի կողմնակի շաւիղներ, բայց ո՞վ կարող է նկարագրել այն բոլոր ծիծաղելի երեակայանքները, այն բոլոր յիմար տարօրինակութիւնները, որոնց կարող է հասնել մի անգործ բուրժուա իր կեանքի դատարկութիւնը լցնելու համար: Պ. Շէքը որոշ օրէնքներ ունէր տնից դուրս գալու և զբօսանքների համար: Սեւմաստօպօլեան բուլվարը շինելիս, սկզբից մինչև վերջը, նա օրը երկու անգամ գնում էր տեսնելու, թէ ինչպէս է, «առանջ է գնում գործը»:

Ոչ ոք նրանից լաւ չէր ճանաչում յայտնի խանութները և յատուկ վաճառատները, և յաճախ, երբ տիկին Շէքի համբերութիւնը հատնում էր, տեսնելով իր ամուսնու տուտուց գլուխը կպած պատուհանի ապակուն, մինչդեռ ինքը ժրաջան կարկատում էր տանու սպիտակեղէնը, նա գլխիցը կորցնում էր հոգեւորին, ուղարկելով նրան այն կողմերը... «Դու գիտես ք այնտեղ, ո՞նց են ասում, այն փողոցի անկիւնում, ուր այնպէս համով խմորեղէն են ծախում... Գնա մի քիչ առ ճաշի համար»:

Եւ մարդը գնում էր, չափչիւում էր բուլվարը, թրև էր գալիս խանութների առանջ, սպասում էր հանրակառքին, օրուայ

*) Տօմբօլան, տրիւֆէլ:

կէսը զբռնն էր անցկացնում հատը երեք սու *) արժող երկու խմորեղէնի համար, որ ի վերջոյ բերում էր տուն յաղթական կերպով ճակատի քրտինքը սրբելով:

Պ. Շէբը պաշտում էր ամառը, կիրակիները, երկար զբօսանքները ոտով կլամարի կամ Ռօմէնպիլի փողոտ ճանապարհով և տօնօրեայ ամբոխի աղմուկը: Նա այն մարդկանցից էր, որոնք օգոստոսի 15-ից մի ամբողջ շաբաթ առաջ գնում էին դիտելու ապագայ հրաժառուծեան պատրաստութիւնները: Եւ կինը չէր տրտնջում այդ բանից: Գոնէ առ ժամանակ նրա հոգին ազատւում էր այդ անվերջ ախ ու վախ անող արարածից, որ ամբողջ օրերով պտղոտ-պտոյտ էր գալիս նրա աթոռի շուրջը հսկայական ձեռնարկութիւնների ծրագիրներով, առաջուց ձախորդութեան մատնուած կօմբինացիաներով, հին դարմանը քամուն տալով և գայրոյթը թափելով, թէ ինչո՞ւ չէ կարողանում փող վաճառակել:

Խեղճ կինը ինքն էլ փող չէր վաճառակում, բայց նա այնքան լաւ խնայել գիտէր, նրա հիւանալի տնաբարութիւնը այնքան լաւ կարողանում էր ամեն պակաս լրացնել, որ աղքատութիւնը, նրանց մեծ կարօտութեան դրացին, երբէք չէր կարողացել մտնել այդ երեք միշտ մաքուր սենեակներն ու փչացնել այդ խնամքով կարկատած շորեղէնները, այդ չապկած հին կահ-կարասիները:

Շէբերի դռան դէմ, որի պղնձէ բռնակը բութուաբար փայլում էր սրահի մէջ, բացւում էին երկու ուրիշ, աւելի փոքր դռներ:

Դրանցից առաջինի վրայ, արհեստաւոր նկարիչների սովորութեան համեմատ՝ չորս մեխով ամրացրած մի ապետոմս կրում էր «Գործարանի գծագրիչ Ռիսէր» անունը: Միւսից կպցրած էր մի փոքրիկ կաշեառախտակ հետեւալ ոսկետառ մակագրութեամբ.

Տ Ի Կ Ն Ա Յ Ք Դ Ը Լ Օ Բ Է Լ

թույլունքն ու նանքն զարդարանքի համար

Դըլօբէիների դուռը բաց էր մնում յաճախ և ցոյց էր տալիս մի մեծ սալաշատակ սենեակ, ուր երկու կին, մի մայր ու աղջիկը (գրեթէ մի մանուկ), մէկը միւսից գունատ, մէկը միւսից յոգնած, պարապում էին այն հաղաբաւոր փոքրիկ քամածին ար-

*) Սուն հինգ սանտիմ է: Սանտիմը ֆրանկի հարիւրերորդ մասն է: Մի սուն ռուսաց փողով կ'անէ երկու կոպէկ:

հետևներից մէկով, որոնցից կազմուած է «l'Article de Paris *)» կոչուող բանը:

Այն ժամանակ մօղա էր զարդարել կանաչի, դիւարկները և պարահանդիսային զգեստները հարաւային Ամերիկայի այդ գոհարի գոյն ու ակունքների շողք ունեցող թռչնիկներով ու միջատներով: Այդ արհեստն էին բանեցնում տիկին Դըլօրէլները:

Մի խոշորալաճառ առետրատուն, որ ստանում էր ապրանքը ուղղակի Անտիլլեան կղզիներից, անբանալ ուղարկում էր Դըլօրէլներին երկար ու թեթև արկղներ, որոնց մէջից, խուփբը պոկելիս, բարձրանում էր մի անախորժ հոտ ու մլնդեղի փոշի, որի մէջ փայլում էին քորոցուած ճանճերի չեղջեր և իրար հուպ տուած ու թևերը բարակ թղթի հանգոյցներով կապած թռչուններ: Պէտք էր սաբքել այդ բոլորը, այնպէս անել, որ ճանճերը դողդողան արդրի թևերի վրայ, բզկտել կօլիբրիկների փետուրները, փայլ տալ նրանց, կարկատել մետաքսի թելով կարմրագոյն թաթիկների կտրուածքները, երկու պնպղան ուլունքներ դնել մարած աչքերի տեղ, տալ միջատին կամ թռչնիկին իրան յատուկ գողտրիկ ու կենդանի գիւթը:

Մայրը բանում էր աղջկայ դեկավարութեամբ, որովհետև Դէզիրէն, դեռ բոլորովին ջահէլ, ունէր նուրբ ճաշակ ու յաւերժանարսի հնարագիտութիւն և ոչ ոք չէր կարող նրա նման՝ ուլունքէ աչքեր անցկացնել թռչունների փոքրիկ գլուխներին կամ բանալ նրանց ընդարձացած թևերը:

Մանկութիւնից ի վեր կաղ, չնորհիւ մի պատահարի, որ ամենևին չէր վնասել կանոնաւոր ու նուրբ դէմքի սիրունութեանը, Դէզիրէ Դըլօրէլը ծուլանում էր առհասարակ դուրս գալ տանից: Նրա այդ ծուլութեան և գրեթէ հարկադիր անշարժութեան հետևանքն էր անշուշտ նրա դէմք մի տեսակ արիստոկրատական գոյնը և ձեռների առանձին սպիտակութիւն: Միշտ կօքէտաբար սանրուած, նա անցնում էր ամբողջ օրեր իր մեծ բաղկաթոռի մէջ, մօղային պատկերներով ու գոյնզգոյն թռչնիկներով ծանրաբեռնուած սեղանի առաջ, զբոսնելով իր արհեստի քմածին ու աշխարհիկ գողտրիկութեան մէջ մոռացութիւն իր վշտի և մի տեսակ վրիժառութեան միջոց իր չնորհազուրկ կեանքի համար:

Թւում էր նրան, թէ բոլոր այդ փոքրիկ թևերը թռիչք են առնելու իր անշարժ սեղանի վրայից, որպէս զի իսկական ճանապարհորդութիւններ կատարեն Փարիզեան աշխարհում ու շող-

*) Փարիզեան մանրունքներ:

շողան տօնախմբութիւնների մէջ, ջահերի լոյսում, և բաւական էր տեսնել միայն այն, թէ ինչպէս էր նա ցցում իր ճանճերն ու թռչնիկները, որպէս զի մարդ կարողանար գուշակել նրա մտքերի դարձուածքը: Վհատութեան ու տխրութեան օրերում թռչնիկների երկարով կտուցները ձգւում էին առաջ, թեկերը լայն բացւում, կարծես կատաղի թափ ստանալու համար դէպի հեռու, շատ հեռու հինգերորդ յարկի բնակարաններից, երկաթէ վառարաններից, զրկանքներից, չքաւորութիւնից: Ուրիշ օրեր, երբ նրա սիրտն ուրախ էր լինում, թռչնիկները կենսազմայլ տեսք էին ունենում, կատարեալ խիզախ ու չարածճի տեսքը մօդային քմայքի...

Երջանիկ թէ դժբախտ, Դէզիրէն աշխատում էր միշտ մի և նոյն եռանդով: Լուսարացից մինչև ուշ գիշեր նրա սեղանի վրայ լիքն էր լինում բանուածքը: Արեւի վերջին շողերը մարելիս, երբ ամեն կողմից սկսւում էին հնչել շրջակայ գործարանների զանգերը, տիկին Դըլօրէլը վառւում էր լամպը և, աւելի քան թեթեւ ընթրիքից յետոյ, մայր ու աղջիկ նսրից նստում էին գործի:

Այդ երկու անխոնջ կանաչք մի նպատակ, մի յարակայ գաղափար ունէին, որ թոյլ չէր տալիս նրանց զգալ հարկադիր տքնութիւնների ծանրութիւնը: Հռչակաւոր Դըլօրէլի դերասանական փառքն էր այդ:

Այն օրից ի վեր, երբ թողել էր գաւառական թատրոնները և եկել Փարիզ այնտեղ բեմերում խաղալու համար, Դըլօրէլը միշտ սպասում էր, որ մի բանիմաց թատրոնապետ,—հանձարներ յայտնագործող իդէալական և նախախնամառաք թատրոնապետներից մէկը,—գայ գտնի նրան ու առաջարկի նրա ձիրքին վայել մի դեր: Թերևս նրան յաջողէր գտնել, մանաւանդ սկզբներում, մի միջակ պաշտօն երրորդակարգ թատրոններից մէկում, բայց Դըլօրէլը չէր ուզում իր սքսէքը իջեցնել:

Նա աւելի լաւ էր համարում սպասել, մաքառել, ինչպէս ինքն ասում էր... Եւ անա թէ ինչպէս էր նա հասկանում այդ մաքառումը:

Առաւօտեան, իր սենեակում, յաճախ նոյն իսկ դեռ անկողնում, նա կրկնում էր իր հին ուղեքառաւորի դերերը, և մայր ու աղջիկ դողդողում էին, լսելով, թէ ինչպէս միջնորմի յետեւում թնդում էին «Անտօնի» և «Մանուկների բժշկի» նշանաւոր հատուածները, արտասանուած որոտալից ձայնով, որ խառնուում էր Փարիզի ահագին հազարարհեստ փեթակի աղմուկին: Յետոյ, նախաճաշից վերջը, դերասանը ամբողջ օրով դուրս էր գալիս տանից և դնում կատարելու իր սովորական «պտոյտը».

այսինքն փոքրիկ քայլերով զբօսնելու Շատո-դ'Օի և Մադլենի միջև, ատամիտորիկը բերնին, գլխարկը մի քիչ թեք դրած, միշտ ձեռնոցները հագին, սրբած ու կոկած:

Հագնուածքի հարցը մեծ կարևորութիւն ունէր նրա աչքում: Այդ նրա յաղոլութեան ամենամեծ գրաւականներից մէկն էր, այն խայծն էր, որ հրապուրելու էր թատրոնապետին, այդ հռչակաւոր բանիմաց թատրոնապետին, որի մտքովն անգամ չէ կարող անցնել դերասան վարձել անշնորհ հագնուած թերմաշի մէկին:

Եւ ահա տիկնայք Դըլօբէլները ամեն կերպ հոգս էին տանում, որ ոչինչ չը պակասի նրան: Երեւակայեցէք, թէ որքան ճանճ ու թռչուն էր հարկաւոր, որպէս զի խեղճ կանայք կարողանային զուրկել այդ զուիի մարդուն: Դերասանը շատ բնական էր գտնում այդ:

Նրա կարծիքով, կնոջ ու աղջկայ գործ դրած ջանքերն ու քաշած զրկանքները ուղղակի իրան չէին վերաբերում, այլ այն խորհրդաւոր ու անյայտ հանճարին, որի մի տեսակ աւանդապահն էր համարում իրան:

Որոշեալ նմանութիւն կար Շէքսպիրի ու Դըլօբէլների ընտանեկան դրութեան մէջ: Ախայն թէ Դըլօբէլների տանը այնքան տխուր չէր, որքան Շէքսպիրի տանը: Շէքսպիրը զգում էին իրանց փակուած մանր հասոյթատէրների միշտ միակերպ և անհորիզոն կեանքի չըջանալու, մինչդեռ դերասանի ընտանիքում յոյսը և պատրանքը հրաշալի տեսարաններ էին բանում ամեն կողմից:

Շէքսպիրը նմանում էին անանցիկում (impasse, тупикъ) բնակող մարդկանց: Դըլօբէլները ասլըում էին փոքրիկ ու կեղտոտ, անդոյս ու անօդ փողոցում, որի միջով շուտով պէտք է անց կ'անցնէին մի մեծ բուլվար: Բացի այդ, տիկին Շէքսպիրը հաւատ չուներ այլ ևս իր մարդու վրայ, մինչդեռ նրա հարկանուհին, լոկ «գեղարուեստ» մոգական բառի շնորհիւ, երբէք չէր երկմտել իր ամուսնու նկատմամբ:

Եւ սակայն երկար տարիներից ի վեր պ. Դըլօբէլը բոլորովին անօգուտ վերմուտ էր խմում թատրոնական գործակալների հետ, օշինդր՝ վարձկան ծափահարների պարագլուխների հետ, բնատէր՝ փողովիխտանների, գրամատուրգների և թատրոնական հռչակաւոր մեքենապետի հետ: Հրաւիրող չը կար ու չը կար: Այնպէս որ, դեռ ոչ մի անգամ բեմ դուրս չ'եկած Փարիզում, խեղճ մարդը քիչ-քիչ անցել էր առաջին սիրահարների դերերից զօրեղ գրամատիկական դերերի, յետոյ՝ ֆինանսիստների, յետոյ աղնիւ-

հայրերի, յետոյ պարզամիտների դերերի...

Այդտեղ նա դէմ էր առել:

Երկու-երեք անգամ ծանօթները միջոց էին տուել նրան իր ապրուստը վաստակելու, փորձելով տեղաւորել նրան իբրեւ անօրէն ժողովարանում կամ սրճարանում, կամ իբրեւ վերակացու մեծ խանութներում, Phares de la Bastille-ում, Colosse de Rhodes-ում: Դրա համար բաւական էր միայն ունենալ վայելուչ ձևեր, իսկ ինչ պակասէր, պակասէր Դըլօրէլին, այդ չէր պակասի: Եւ սակայն ամեն անգամ, երբ այդպիսի առաջարկութիւն էին ա-նում, մեծ մարդը պատասխանում էր հերոսական մերժումով:

— Ես իրաւունք չունեմ հրաժարուել թատրոնից... ասում էր նա:

Այդ տնաքանդի բերնում, որ տարիներէից ի վեր ոտք չէր դրել բեմի վրայ, սաստիկ ծիծաղելի էր այդ, բայց կարող էր ծիծաղի սիրտ մնալ, երբ մարդ տեսնում էր, թէ ինչպէս նրա կիներն ու աղջիկը օր ու գիշեր կուլ էին տալիս մկնդեղի փոշին, երբ մարդ լսում էր, թէ ինչպէս նրանք եռանդուն կերպով կըր-կնում էին, կոտրատելով ասեղները թոջնիկների արօյրէ թեւերի վրայ:

— Ո՛չ, ո՛չ: Պ. Դըլօրէլը իրաւունք չունի հրաժարուել թատ-րոնից:

Երջանիկ մարդ,—միշտ զիջողաբար ժպտուն կոկոն աչքերը և դրամաներում թաղաւորելու սովորութիւնը ընդ միշտ ստեղ-ծել էին նրա համար՝ երես տուած ու հիացմունքով շրջապա-տուած արքայամանուկի մի քաջատիկ դիմք: Երբ նա դուրս էր գալիս տանից, Ֆրան-Բուրժուա փողոցի խանութպանները, իբրեւ իսկական փառիդեցիներ, որոնք սիրում են ամեն ինչ, որ առն-չութիւն ունի թատրոնի հետ, գլուխ էին տալիս նրան յարգալից կերպով: Այնքան լաւ էր հագնուած լինում նա միշտ: Եւ բա-ցի այդ, այնքան բարի էր, այնքան սիրալիր... Եւ արի տես, որ ամեն չաբաթ երեկոյ նա, Ռիւյի Բլասը, Անտօնին, Մարմարէ աղջիկների Ռաֆայէլը, Սալանի հեների Անդրէն, դուրս էր գա-լիս տանից մօղիատուհու թղթէ արկղը կոնատակին և տանում էր կնոջ ու աղջկայ աշխատանքը Սէնտ-Դընի փողոցի արհես-տական ծաղիկների խանութը...

Բայց նոյն իսկ այդպիսի յանձնարարութիւն կատարելիս՝ այնքան ազնուական տեսք ունէր անպիտանը, այնքան բնական վեհութիւն, որ հաշիւը ստուգող գործակատարուհին սաստիկ քաշուած էր վճարել մի այդպիսի անաղարտ ջէնտլմէնի աչն չնչին գումարը, որ հասնելու էր նրան և որ սակայն նրա կնոջ ու աղջկայ ամբողջ չաբաթուայ չարչարանքների վարձն էր:

Ինչ խօսք, որ այդ երեկոնները դերասանը ընթրիքին տուն չէր վերադառնում: Տեսեցիք առաջուց գիտէին այդ: Նա միշտ հանդիպում էր բուլվարում հին ընկերներին մէկին, իր նման մի անաջողութեան զոհի,—այնքան անաջողութեան զոհեր կան այդ սրբազան արհեստում,—որին հրաւիրում էր ճաշարան, սրճարան... Յետոյ, ամենայն ճշտութեամբ,—և տեսցիք շատ չնորհակալ էին նրանից դրա համար,—նա տուն էր բերում մնացած փողը, երբեմն էլ հետը մի փունջ կնոջը, մի փոքրիկ ընծայ Դէզիլէին, մի դատարկ, մի ոչինչ բան: Ի՞նչ արած: Թատրոնական սովորութիւններ են այդ: Ի՞նչ արժի մէլօդրամաներում մի բուռը ոսկի չպրտել պատուհանով:

«Է՛յ, հաստազլուխ, առ անշտ քսակն ու գնա տիրուհուդ ասա, որ սպասում եմ իրան»:

Եւ այդպիսով, չը նայելով իրանց մեծ արիւթեանը և բանեցրած արհեստի բաւական չահաւետութեանը, տիկին Դըլօբէլները յաճախ փողի նեղութիւն էին կրում, մանաւանդ փարիզեան մանրուկների առևտրի մեռած չրջաններում:

Բարեբախտաբար, հետու չէր բարի Ռիսլէրը, որ միշտ պատրաստ էր օգնել իր բարեկամներին:

Գիլիօմ Ռիսլէրը, երբորդ սրահակից տնուորը, ապրում էր իր Ֆրանց եղբոր հետ, որ մօտ տասնհինգ տարով փոքր էր նրանից: Այդ բարձրահասակ, չէկ, յաղթանդամ ու կարմրերես չվէյցաբացիները գեղջուկ և առողջ գէմբեր էին մոցնում այդ մոռյալ աշխատաւոր տան խեղդուկ մթնոլորտի մէջ: Մեծ եղբայրը գծագրիչ էր Ֆրոմօնների գործարանում, իսկ փոքրը մեծի հաշուով պատրաստում էր Շապտալի վարժարանում Կենտրոնական զբոսը մտնելու:

Երբ Գիլիօմը նոր էր եկել Փարիզ և չը գիտէր ինչպէս սարքէր իր փոքրիկ բնակարանը, տիկնայք Շէրերը և Դըլօբէլները օգնում էին նրան խորհուրդներ ու տեղեկութիւններ տալով և առհասարակ ցոյց էին տալիս ամեն տեսակ աջակցութիւն, որ անհրաժեշտ էր այդ միամիտ, ամաչկոտ ու մի քիչ ծանրաշարժ խելքի տէր տղային, որ սաստիկ քաջում էր իր օտարական արտասանութեան ու կերպարանքի պատճառով: Մի քիչ ժամանակուայ հարեանութիւնից ու փոխադարձ ծառայութիւններից յետոյ, Ռիսլէր եղբայրները այդ երկու ընտանիքների անդամները դարձան:

Տօն օրերին նրանք միշտ ճաշում էին այդ ընտանիքներից մէկում կամ միւսում, և մեծ ուրախութիւն էր այդ երկու պանդուխտների համար ընտանեկան կեանքի ու գորովի մի անկիւն գտնել այդ հարեանների տներում, որքան էլ համեստ ու

խզճուկ լինէր նրանց ասպրուստը: Իր արհեստում շատ վարպետ գծագրիչի ուճիկը թոյլ էր տալիս Գիլիօմին օգնել Դըլօբէլներին տան վարձի պայմանաժամերին և այցելել Շէքերին, իբր մեծ հօրեղբայր, միշտ ծանրաբեռնուած սիւրպրիզներով ու ընծաներով, այնպէս որ փոքրիկ Շէքը նրան տեսնելուն պէս՝ վազում էր մօտը, անտղում գրպանները, թռչում ծնկների վրայ:

Կիրակի օրերը նա բոլորին տանում էր թատրոն և գրեթէ ամեն երեկոյ պ. Շէքի ու Դըլօբէլի հետ գնում էր Բլօնդէլ փողոցում գտնուող մի դարեջրատուն, ուր հիւրասիրում էր նրանց դարեջրով ու աղած պրախսկլներով: Գարեջուր ու պրախսկլ, — այդ նրա թոյլ կողմն էր:

Նրա համար չը կար աւելի մեծ բախտաւորութիւն, քան դարեջրի գաւաթին առաջին նստել այդ երկու բարեկամների արանքին ու ականջ դնել նրանց զրոյցին, կուշտ-կուշտ ծիծաղով ու գլխի թօթուումով միայն խառնուելով նրանց խօսակցութեան մէջ, որ առնասարակ բաղկացած էր լինում անվերջ տրտունջներից հասարակութեան դէմ:

Շնորհիւ իր մանկական ամօթխածութեան և գերմանաբանութիւններին *) որոնցից ժամանակ չէր ունեցել աղատուել իր անընդհատ աշխատանքով լի կեանքում, նա շատ ղօռւարանում էր մօքերը արտայայտելիս: Բացի դրանից, այդ երկու բարեկամները պատկառանք էին ազդում նրան: Նրանք այն ահագին գերազանցութիւնն ունէին նրա համեմատութեամբ, որ ունենում են առնասարակ ոչինչ չանող մարդիկ աշխատաւորների համեմատութեամբ, և պ. Շէքը, նուազ վեհանձն քան Դըլօբէլը, առանց քաշուելու զգալ էր տալիս այդ նրան: Շատ բարձրից էր վերաբերում նրան պ. Շէքը: Նրա աչքում՝ Ռիսլէրի պէս օրը տաս ժամ աշխատող մարդը անընդունակ էր այդքան աշխատանքից յետոյ մի խելքը գլխին կարծիք յայտնել: Ներքեմ գծագրիչը, բոլորովին ջարդուած տուն գալով գործարանից, պատրաստուած էր գիշերը լուսացնել մի որ և է վռազ աշխատանքի վրայ: Պէտք էր տեսնել այն ժամանակ պ. Շէքի վրդովմունքը:

— «Որ քաշովս մէկ ոսկի տալին, այդպիսի արհեստով չէի պարապիլ»՝ ասում էր նա վերուելով և յետոյ աւելցնում, նայելով ուղիղ Ռիսլէրի երեսին՝ այցելու բժշկի ինքուիզիտօրական հայեացքով. «Այ, երբ որ կաթուածահար կը լինէք...»

Դըլօբէլը այդքան վայրագ չէր, բայց աւելի ևս բարձրից էր վերաբերում նրան.

*) Ռիսլէր Շվեյցարիայի գերմանախօս մասիցն էր:

«Le cèdre ne voit pas une rose à sa base *)»:

ԴՐԸՐԵՆԸ ՀԵՐ տեսնում Ռիսէրին իր ոտների մօտ:

Երբ, պատահմամբ, այդ մեծ մարդը բարեհաճում էր նկատել նրա ներկայութիւնը, մի առանձին ձև ունէր, որով թեքւում էր դէպի նա ականջ դնելու համար և ժպտում նրա խօսքերին, ինչպէս ժպտում են երեխաների խօսած ժամանակ, կամ թէ զուարճանում էր շլացնելով նրան զանազան պատմութիւններով դերասանութիւնների կեանքից և խրատ տալիս, թէ ինչպէս պէտք է իրան պահի, ինչ մօտից առնի հազուատեղէնը, չը կարողանալով հասկանալ, թէ ինչպէս այդքան փոք վաստակող մի մարդ միշտ հագնուած է լինում տարրական դպրոցի մի հասարակ վերակացուի նման: Բարի Ռիսէրը, համոզուած իր նուատութեան մէջ, աշխատում էր նրանց ներողամտութեանը արժանանալ անվերջ հաճոյակատարութեամբ, հազար ու մի մանր ծառայութիւններով, պարտաւոր լինելով ամեն կերպ սիրալիր վերաբերուել նրանց, որովհետեւ—չէ՞ որ—նա էր նրանց մշտական բարեբարը:

Այդ երեք սրահակից տների մէջ փոքրիկ Շէբը միացման գիծ էր անց կացնում իր անվերջ երթևեկութեամբ:

Օրուայ ինչ ժամին էլ որ լինէր, նա սպրդում էր ԴՐԸՐԵՆԵՐԻ արհեստանոցը, զուարճանում էր նրանց աշխատանքով, մօտիկ էր տալիս ճանձ ու թռչնիկներին և, արդէն աւելի կօքէտ քան խաղաւեր, եթէ մի ճանձ ճանապարհին կորցրած էր լինում իր թեւերից մէկը կամ մի կօլիբրի՝ իր ազուամազ վզնոցը, նա փորձում էր իսկոյն զարդ չլինել իր համար այդ բեկորներից, խրել այդ վառ գոյնը իր նուրբ մազերի խոպուպիկների մէջ: Դէզիբէն ու մայրը ծիծաղում էին, տեսնելով, թէ ինչպէս նա կոտորուելով ու խոպտալով ձգւում է ոտների ծալրի վրայ՝ նսեմացած հայելուն համեկու համար: Յետոյ, ինքն իր վրայ զմայլելուց կշտացած, երեխան բաց էր անում դուռը իր մատիկների ամբողջ ոյժով և, մազերը խառնուելու ահից, գլուխը ցից բռնած, ծանր-ծանր գնում էր ծեծելու Ռիսէրների դուռը:

Յերեկը այնտեղ ոչ ոք չէր լինում բացի դպրոցական Ֆրանցիցից, որ խելօք նստած պատրաստում էր դասերը, գլուխը քաշ իր գրքերի վրայ: Բայց հէնց որ Սիդօնին մտնում էր, էլ մնաս բարով պարապմունք: Պէտք էր ամեն բան թողնել ու ընդունել այդ կօլիբրիազարդ մազերով գեղեցկուհուն, որ, իբր մի իշխանուհի, այցելելու էր նրան Շապտալի դպրոցում, որպէս զի իր համար փեսացու ուզէր նրան տեսչից:

*) Մալրի ծառը չէ նշմարում վարդը իր ստորոտում:

Շատ տարօրինակ էր, յիրաւի, տեսնել, թէ ինչպէս այդ շատ արագ հասակ առած ահագին տղան խաղում էր այդ ութ տարեկան երեխայի հետ, ինչպէս ինքն էլ փոքր երեխայ էր դառնում նրա քմահաճոյքներին բաւարարութիւն տալու համար, ինչպէս պաշտում էր նրան ու զիջում ամեն բանում, այնպէս որ երբ անելի ուշ բոլորովին սիրահարուեց նրա վրայ, ոչ ոք չէր կարող ասել, թէ իսկապէս ինչ ժամանակ էր սկսուել այդ:

Ինչքան էլ գուրգուրում էին փոքրիկ Շէքին այդ երկու ընտանիքներում, այնուամենայնիւ գալիս էր միշտ մի բոպէ, երբ նա փախչում էր դէպի վերնագաւթի պատուհանը: Այդտեղ էր նա գտնում իր ամենամեծ զուարճութիւնը, մի մշտաբաց հորիզոն, կարծես մի ապագայի տեսիլք, որ փոքրիկը դիտում էր հետաքրքրութեամբ, կռացած դէպի նա առանց երկիւղի, որովհետեւ երեխաները գլխի պտոյտ գալ չունեն:

Դէպի իրար թեքուած հերձաքարէ կտուրների արանքին, գործարանի բարձր պատը, պարտէզի սօսիների կատարները և ապակեպատ արհեստանոցները երևում էին նրա աչքին իբր մի աւետեաց երկիր, իբր իր երազների աշխարհ:

Այդ Ֆրոմօնների տունը հարստութեան վերջին խօսքն էր նրա համար:

Այն տեղը, որ այդ տանը բռնում էր Մարէի ամբողջ այդ անկիւնում, որ սրու ժամերին կոլորուած էր լինում նրա ծխում և լինրա արհեստանոցների ժխորով, Ռիպլերի յափշտակուած առասպելանման պատմութիւնները Ֆրոմօնի կարողութեան, բարութեան ու ճարպիկութեան մասին, հետաքրքրութիւն էին զարթեցրել երեխայի մէջ, և, ինչ որ կարելի էր տեսնել բնական չէնքերից՝ կտրտած փայտէ նուրբ վանդակափեղկերը, կլոր գաւիթը, որի առաջ շարած էր պարտէզի կահկարասիքը, սպիտակ արուրից շինած ու ոսկեզօծ լարերով թռչնափանդակը, որ փայլում էր արևում, ծծուած կապոյտ կառքը բակումը,—երեխայի հիացման մշտական առարկաներն էին այդ բոլոր բաները:

Նա դիտէր այդ տան բոլոր սովորութիւնները,—զանգը տալու ժամը, բանուորների ելքը, չաբաթ օրերի վարձավճարումը, որի չնորհիւ գանձապահի փոքրիկ լամպը վառ էր մնում այդ օրերը մինչև ուշ երեկոյ, և երկար ու ձիգ ժամերը կիրակիները կէսօրից յետոյ, արհեստանոցները փակ, վառարանը հանգած, չորս կողմը խորին լռութիւն, որի չնորհիւ նրա ակաջին էին հասնում պարտէզում խաղացող ու վազվզող Կլէրի ու նրա հօբեղբօր որդու, Ժօրժի ձայները: Մանրամասնութիւններն էլ Ռիպլերիցն էր իմանում:

«Տոյց տուր ինձ հիւրասնեակի պատուհանները, ասում էր նա նրան... իսկ Կլէրի սենեակը...»:

Ռիսլէրը, հիացած այդ արտասովոր համակրութ իմից դէպի իր սիրելի գործարանը, բացատրում էր վերևից երեխային չէնքերի դատաւորութիւնը, ցոյց էր տալիս նրան տպելու, ոսկեզօծելու, գոյն տալու արհեստանոցները, այն սենեակը, ուր ինքը զբաղւում էր գծագրութեամբ, շողեչարժ մըքննաների սրահը, որտեղից բարձրանում էր վիթխարի ծխնկոյզը, որ իր եռանդուն ծխով սեպնում էր բոլոր չրջակայ պատերը և չէր կապածում անշուշտ, թէ դրացի յարկերից մէկի տակ ծածկուած մի փոքրիկ կեանք խառնում է իր ամենանուիրական մտքերը նրա անխոնջ աշխատանքի ուժգին շնչառութեանը:

Մի օր վերջապէս Սիդօնին մուտք գործեց այդ հեռուից նշմարուած դրախտը:

Տիկին Ֆրոմօնը, որի մօտ Ռիսլէրը յաճախ խօսում էր իր փոքրիկ հարևանուհու սիրունութեան ու խելօքութեան մասին, խնդրեց նրան բերել փոքրիկին այն պարահանդէսին, որ ինքը պատրաստում էր Ծննդեան տօների համար: Սկզբում պ. Շէրը մերժեց շատ չոր կերպով: Արդէն այն ժամանակն էլ այդ Ֆրոմօնները, որոնց անունը միշտ Ռիսլէրի բերնումն էր, գրգռում ու ստորացնում էին նրան իրանց հարստութեամբ: Բացի այդ պարահանդէսը զգեստաւոր էր լինելու, իսկ պ. Շէրը—որ Ֆրոմօնների պէս որմաթուղթ չէր ծախում—միջոցներ չուներ իր աղջկան թուչկոտանի հագուստ հագցնելու: Բայց Ռիսլէրը շատ պնդեց, յայտնեց, որ իր վրայ է վերցնում ամեն բան ու ձեռաց-ձեռ սկսեց զծագրել մի չվէյցարական զգեստի օրինակ:

Յիշելիք երեկոյ էր այդ:

Տիկին Շէրի սենեակում, որ լիքն էր զանազան կտորնեքով, քորոցներով և առհասարակ հագուստեղէնի հազար ու մի մանր մուշր առարկաներով, զուքում զարդարում էին Սիդօնիին Դէզիրէ Դըլօբէլի դեկավարութեամբ: Պատիկ Սիդօնին, որ աւելի մեծ էր երեւում չվէյցարական հագուստի կարճ չրջազգեստով (իւրկա), ուղիղ ու անչարժ կանգնած էր հայելու առաջ, շողշալով իր զարդարանքի մէջ: Աքանջելի էր նա: Սև-սև չերտերով կարմիր ասուեակէ (ֆլանէլ) չրջազգեստը, սպիտակ կրծկալը ու կրծկալի վրայից իրանքի (կօրսաժ) խաչկապ արած թաւիչէ ժադաւէնները, յարդէ գլխարկի տակից բաց թողած չաքանակագոյն մագերի հրաշալի երկար հիւսերն ու առհասարակ չվէյցարուհու հագուստի փոքր ինչ գոեհիկ մանրամասները մի առանձին փայլ էին ստանում չնորհիւ այդ երեխայի խելացի

կերպարանքին ու նազանի չնորհալիութեանը, որ շատ սազում էր այդ թատրոնական պաճուճանքի վառ գոյներին:

Բոլոր հարեանները հաւաքուել էին ու հիանում էին բերանարաց: Ուղարկեցին պ. Դըլօբէլին կանչելու: Մինչև նրա գալը կաղիկ օրիորդը շիտկում էր փոքրիկի չըջագգեստի ծալքերը ու հողաթափների ժապաւէնները և վերջին ակնարկն էր գցում իր արածի վրայ, առանց ասեղը ձեռքից վայր դնելու, որովհետև խեղճն էլ կենդանացել էր, յափշտակուած այդ յուզիչ հանդէսից, ուր ինքը չէր գնալու: Մեծ մարդը եկաւ: Նա կրկնել տուեց Սիդօնին առաջուց սովորեցրած երկու-երեք գեղեցիկ ծնողջոյններ (ռէվէրանս), ինչպէս և քայլելու, դիրք ընդունելու և ժպտալու ձևը, այնպէս ժպտալու, որ կլորիկ բացուած բերանում ուղիղ մի ձկութի դնելու տեղ մնայ: Շատ ծիծաղելի էր տեսնել, թէ ինչպէս ճշտութեամբ կատարում էր այդ բոլորը փոքրիկը:

— Դերասանուհու արեւն կայ երակներումը... յափշտակուած ասում էր հին դերասանը, չը կարողանալով հասկանալ, թէ ինչու այդ ահագին էշ Ֆրանցը քիչ էր մնում լայ...

Այդ երջանիկ երեկոյից մի տարի անցած Սիդօնին ամենաշոյն ճշտութեամբ կարող էր ասել ինչ ծաղիկներով էին զարդարուած Ֆրոմօնների նախասենեակները, ինչ գոյնի էին կահ կարասիքները, ինչ պար էին նուագում նրա ներս մտնելու ընդմէջին, — այնքան խոր էր եղել նրա հաճոյքի տպաւորութիւնը: Նա ոչինչ չը մոռացաւ, ոչ իր շուրջը պտոյտ-պտոյտ եկող զգեստները, ոչ մանկական ծիծաղները, ոչ նրբատախտակ սօթլիկ յատակի վրայ խտպացող փոքրիկ քայլերը: Մի րոպէ, երբ մի մեծ կարմրամետաքս բազմոցի պոռնգին նստած, իր առաջը գտնուող մատուցարանից վերցնում էր խմելու առաջին օշարակը իր կեանքի մէջ, նա յիշեց յանկարծ իրանց մութ տանդուխքը և օղագուրկ փոքրիկ բնակարանը, և ընդ միշտ թողնուած հեռաւոր երկրի տպաւորութիւն զգաց:

Այն էլ պէտք է ասել, որ ամենքը հիանում էին և զմայլում նրա վրայ, և չորս կողմից փայփայում նրան: Սիրունիկ կլէր Ֆրոմօնը, նօրմանդուհու ժանեակապատ զգեստով, ներկայացրեց նրան իր հօբեղբօրորդի Ժօրժին, որ հիանալի հուսար էր զարձեղ և ամեն քայլափոխում շուռ էր գալիս տեսնելու, թէ ինչ տպաւորութիւն է գործում իր գօտուց կախուած պայուսակը:

— Լսիր, Ժօրժ, սա իմ ընկերուհին է... Կիրակի օրը կը գայ մեզ հետ խաղալու... Մայրիկը թոյլ տուեց:

Եւ երջանիկ երեխայի միամիտ սրտաբացութեամբ նա համբուրեց փոքրիկ Շէրին ի բոլոր սրտէ:

Սակայն պէտք էր տուն գնալ... Դեռ երկար ժամանակ,

մութ փողոցում, ուր հալչում էր ձիւնը, ճրագները հանգցրած սանդուխի վրայ ու նիրհած սենեակում, ուր սպասում էր նըրան մայրը, դահլիճների շողշողուն լոյսը փայլում էր Սիդօնիի չլացած աչքերի առաջ:

— Հը՞, ինչպէս էր, լաւ էր... լաւ ուրախացար, կամաց ձայնով հարցնում էր նրանից տիկին Շէրը, մի առ մի արձակելով նրա փայլուն զգեստի ճարմանդները:

Եւ Սիդօնին, յոգնութիւնից թմրած, առանց պատասխանելու քնում էր կանգնած տեղը, սկսելով տեսնել մի գեղեցիկ երագ, որ տեսլու էր նրա ամբողջ ջահէլութեան ընթացքում և որ այնքան արտասուք էր խլելու նրանից:

Կլէր Ֆրոմօնը կատարեց իր խօսքը: Սիդօնին շուտ-շուտ գնում էր խաղալու աւազած սիրուն պարտէզում և կարող էր մօտիկից տեսնել կտրտած փայտէ նուրբ պատուհանածածկերը և ոսկեզօծ լարերով վանդակը: Նա ծանօթացաւ անազնի գործարանի բոլոր խորշերին ու անկիւններին և շատ կիրակիներ, կէսօրից յետոյ տիրող խաղաղութեան մէջ, տափկենայով էր խաղում տպագրական սեղանների յետերին: Տօն օրերին նրա համար միշտ աման էր դրած լինում մանկական սեղանի վրայ:

Ամենքը սիրում էին նրան, բայց ինքը երբեք առանձին սէր չէր ցոյց տալիս ոչ ոքի վերաբերմամբ: Քանի որ այդ փարթամութեան մէջն էր լինում, նա իրան գորովալից էր զգում ու երջանիկ և կարծես գեղեցկացած, բայց հէնց որ վերադառնում էր տուն ու սկսում սրահի պատուհանի նսեմ ապակիների միջով նայել գործարանին, ինչ որ կսկիծ էր զարթնում սրտում, ինչ որ անբացատրելի զայրոյթ:

Եւ սակայն՝ Կլէր Ֆրոմօնը բոլորովին ընկերաբար էր վերաբերում նրան:

Երբեմն Ֆրոմօնները իրանց երեկի կապոյտ կառքով նրան տանում էին զբօսանքի Բուլօնեան անտառը կամ Տիւլլըրի, և կամ գիւղը, մի ամբողջ չաբաթ անց կացնելու Գարդինուս պապի դղեակում, Սալվինի-սիւր-Օրթում: Ռիսէրը շատ հպարտանում էր իր փոքրիկ յաջողութեամբ և նրա տուած ընծաների չնորհիւ փոքրիկը միշտ հաղնուած էր լինում սիրուն ու չնորհքով... Այդ պատուի ինդիք էր տիկին Շէրի համար, իսկ սիրուն կաղիկն էլ այնտեղ պատրաստ էր ծառայեցնելու իր բարեկամուհու օգտին իր բնածին կօքէտութեան բոլոր անշահագործ մնացած դանձկրը:

Գալով պ. Շէրին, որ միշտ թշնամաբար էր վերաբերում Ֆրոմօններին, նա ծուռ աչքով էր նայում այդ հետդնետ սաստկացող մտերմութեանը: Դրա իսկական պատճառն այն էր, որ

իրան չէին հրաւիրում, բայց նա միշտ ուրիշ պատճառներ էր բերում և ասում էր կնոջը.

— Չեմ տեսնում, ինչ է, որ աղջիկդ այնտեղից վերագառնալուց յետոյ տխուր է լինում ու ժամերով երազում է պատուհանի մօտ կանգնած:

Բայց խեղճ տիկին Շէբը, որ այնքան անբախտ էր ամուսնանալուց ի վեր, աննախատես էր դարձել դրա չնորհիւ նա պնդում էր, թէ ապագայի ահից պէտք է աշխատել օգտուել ներկայից և ձեռքից բաց չը թողնել երջանկութեան վաղանցուկ բոպէները, որովհետեւ մարդս յաճախ ուրիշ ոչ մի նեցուկ աւսփոփանք չէ ունենում իր կեանքում բացի երջանիկ մանկութեան քաղցր յիշատակից:

Այս մէկ անգամին այնպէս դուրս եկաւ, որ պ. Շէբի ասածն էր ճիշդ:

(Լը ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԷՅՆԷՏԻ ՆՈՐ ԵՐԳԵՐԻՅ

*
* *

Զրի Շուշանն ծովի ափին
Մըսխմուր վեր նայեց,
Գուհաս դէմքով մաշուած լուսինն
Բարեւ նորան ուղարկեց:

Ամաչելուց Շուշանն իսկոյն
Գըլխիկը ցած խոնարհեց,
Բայց խեղճ լուսնի դէմքը սրժգոյն
Իր ոտի սակ նրկասեց...

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆ